ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/16

ք.Երևան «03» մայիսի 2018թ.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն, աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մեգասոֆթ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9850000 (ինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Մեգասոֆթ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
հ/հ 900013220042	ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Դավիթաշեն մ/ճ
ՀՎՀՀ 02534328	հ/հ 220290124225000
Աշխատակազմի ղեկավար՝	ՀՎՀՀ 00931397
Վ. Հասրաթյան_____	Տնօրեն_____Ա.Հայրապետյան
Կ.Տ /ստորագրություն/	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	48981300/2	Ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	դրամ	9850000	1	Արշակունյաց 7	Պայմանագրի հաշվառման պահից սկսած մինչև 20.05.2018թ.

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԵՐԻ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Սույն բնութագրով սահմանվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից շահագործվող «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգում /այսուհետև՝ **Էլեկտրոնային համակարգ**/ անհրաժեշտ ծրագրային ապահովման փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև գնահատողի որակավորում ունեցող անձերի և կազմակերպությունների հաշվառման համակարգի մշակման տեխնիկական պահանջները:

1.2 **Էլեկտրոնային համակարգում** ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն հաշվի առնելով գործող համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները, ինչպես նաև կիրառվող ծրագրային տեխնոլոգիաները:

1.3 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես **էլեկտրոնային համակարգի** ծրագրային ապահովման ընդլայնումներ /extensions/:

1.4 Պատվիրատուն ծրագրային փոփոխությունների մշակման աշխատանքները իրականացնողին կտրամադրի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերը /source code/ և տեխնիկական փաստաթղթերը:

1.5 Համակարգից օգտվողի ինտերֆեյսը և տվյալների բազայում պահվող տեքստային տեղեկատվությունը պետք է ներկայացվի UNICODE տառատեսակով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. **Էլեկտրոնային համակարգում** պետք է մշակվի և ներդման համար Պատվիրատուին հանձնվի միջավայր, որի միջոցով հնարավորություն կընձեռնվի մուտք գործել համակարգի քարտեզագրական բաղադրիչ և ընտրել գնահատման ենթակա անշարժ գույքի միավորները (հողամասեր), ինչպես նաև ըստ կադաստրային ծածկագրի մուտքագրել տվյալ գույքի գնահատման արդյունքում ստացված արժեքները:

2.2. **Էլեկտրոնային համակարգում** անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

- Քարտեզագրական համակարգում ավելացնել **Գնահատման գոտևորում** խումբը հետևյալ շերտերով և ատրիբուտներով՝
    - Ֆիլտրված գույքերի գնահատման արժեքներ
        - Մարզ
        - Համայնք
        - Հասցե
        - Կադաստրային ծածկագիր
        - Պայմանագրային արժեք
        - Գործարքի տեսակ
        - Գործարքի ամսաթիվ
        - Հողամասի նպատակային նշանակություն
        - Հողամասի գործառնական նշանակություն
    - Գնահատման ենթական գույքերի շերտ
        - Հողամասի կադաստրային ծածկագիր
        - Հողամասի մակերեսը քարտեզից
        - Հողամասի մակերեսը տեքստային բազայից
        - Կարգավիճակ
        - Ընտրման ամսաթիվ

և տարանջատել գույնով և շտրիխապատումով:

- Ավելացնել օգտվողներ և տալ հնարավորություն արտաքին միջավայրից մուտք գործել համարակարգ https:// պրոտոկոլի միջոցով
- Ավելացնել գործիք քարտեզում հողամասերն ընտրելու համար: Հողամասերը ընտելու ժամանակ պետք է կատարվի կադաստրային ծածկագրի միջոցով նույնականացում **ARPIS էլեկտրոնային համակարգի** տեքստային տվյալների հետ: Թույլատրվում է ընտրել միայն այն անշարժ գույքի միավորները, որոնց նպատակային նշանակությունը տեքստային տվյալներում մուտքագրված է բնակավայրերի հողեր կամ արդյունաբերական ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր: Բնակավայրերի հողերից ընտրվում են միայն բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման և խառը կառուցապատման գործառնական նշանակություն ունեցող հողամասերը: Քարտեզագրական մոդուլից տվյալ գույքային միավորն ընտրելուց անմիջապես հետո տեքստային տվյլաներից ավտոմատ լրացվում են նպատակային նշանակությունը, գործառնական նշանակությունը, մակերեսը, արխիվային ծածկագիրը և հասցեն:

- Նախատեսել ընտրության չեղարկման հնարավորություն՝ չեղարկման նպատակով ընտրված հողամասն առաջին տողում ցուցադրելու հնարավորությամբ, ինչպես նաև տվյալ հողամասը խմբագրելու և ցանկից հեռացնելու հնարավորություն:
- Նախատեսել ընտրված հաղամասերի՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի, ինչպես նաև ըստ համայնքների (Երևան քաղաքի դեպքում՝ ըստ վարչական շրջանների) հաշվետվության գեներացման հնարավորություն: Հաշվետվությունը պետք է պարունակի հետևյալ դաշտերը. Մարզ, Համայնք, Բնակելի կառուցապատման, Հասարակական կառուցապատման, Խառը կառուցապատման, Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, ընդհանուր քանակ մարզում: Օգտվողի հարմարության համար թույլատրվում է կրճատ գրելաձևը կամ հապավումը: Հաշվետվության համակարգում պետք է նախատեսված լինի նաև որոնում ըստ մարզի և համայքի:
- Նախատեսել հնարավորություն, որը թույլ կտա, ըստ կադաստրային ծածկագրի, լրացնել գնահատման արդյունքում ստացված արժեք (1քմ-ի համար), լրացուցիչ ատրիբուտիվ դաշտ (լրացուցիչ դաշտերի ավելացման հնարավորությամբ), ինչպես նաև հաշվետվության համակարգ նախորդ կետում նկարագրված տրամաբանությամբ:
- Համակարգում նախատեսել օգտվողների հատուկ խմբեր ստեղծելու հնարավորություն, որոնց կտրվի համապատասխան իրավունքներ և լիազորություններ
- Յուրաքանչյուր օգտվող պետք է հնարավորություն ունենա տեսնելու իր կողմից կամ լիազորության դեպքում նաև իր խմբի կողմից ընտրված կամ գնահատված միավորների ցանկը:

ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԵՐԻ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Գնահատողի որակավորում ունեցող անձերի և կազմակերպությունների հաշվառում.

Գնահատողի որակավորում ունեցող անձերի վերաբերյալ տվյալների մուտքագրման դաշտերը՝

- Անուն
- Ազգանուն
- Անձնագիր
- ՀՀՀ
- Բջջային հեռախոսահամար
- Էլեկտրանային հասցե
- ԱԳԳ

հետագայում մուտքագրման դաշտերի ավելացման հնարավորութուն:

Գնահատող կազմակերպության վերաբերյալ տվյալների մուտքագրման դաշտերը ՝

- անվանում,
- պետական գրանցման համար,
- ՀՎՀՀ,
- Գնահատողի որակավորում ունեցող աշխատակիցներ (կապակցվում է ծրագրում մուտքագրված տվյալներից)

- հետագայում մուտքագրման դաշտերի ավելացման հնարավորություն:

Ընձեռնել հնարավորություն հաշվառված գնահատողների և կազմակերպությունների, ինչպես նաև որակազրկված գնահատողների /անուն, ազգանուն որակազրկման հիմք և այլն/ և հաշվառումից հանված կազմակերպությունների առանձին անվանացանկերի արտահանման: Անվանացանկերը պետք է ավտոմատ կերպով արտացոլվեն և թարմացվեն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի պաշտոնական կայքում, ստեղծված վեբ ծառայության միջոցով XML կամ JSON ֆորմատով:

- Ծրագրից օգտվողների գործողությունների լոգավորում

Ծրագիրց օգտվողների հիմնական խմբերը՝

- Գնահատողներ՝

բոլոր գնահատողները պետք է մուտք գործեն համակարգ ծածկանունի և գաղտնաբառի միջոցով, որից հետո նրանց հասանելի կլինի աշխատանքային համապատասխան միջավայր: Գնահատողները կարող են լրացնել հաշվետվության տիտղոսաթերթը կամ այն պետք է լրացվի ավտոմատ կերպով արդեն մուտքագրված տվյալներից /գնահատման կազմակերպության անվանումը, գույքի տեսակ, հասցե, մակերես, գնահատված արժեք և այլն/, ներբեռնեն արդեն իսկ ստորագրված /տնօրենի և գնահատողի կողմից/ հաշվետվությունները, դիտեն հաշվետվություններ: Համակարգը պետք է նույնականացնի և ստուգի գնահատողի և կազմակերպության տնօրենի էլեկտրոնային ստորագրությունները:

- Կադաստրի աշխատակիցներ՝

Կադաստրի պետական կոմիտեի աշխատակիցները պետք է մուտք գործեն համակարգ ծածկանունի և գաղտնաբառի միջոցով, որից հետո նրանց հասանելի կլինի աշխատանքային համապատասխան միջավայր: Կադաստրի աշխատակիցները պետք է ունենան տիտղոսաթերթերը դիտելու հնարավորություն, տեսնեն վիճակագրական տվյալներ /տվյալ գնահատողի կամ կազմակերպության կողմից կատարված գնահատությունների քանակները ընտրված ժամանակահատվածում, տվյալ գույքի գնահատությունների քանակը ընտրված ժամանակահատվածում և այլն/, համապատասխան թույլտվություն ունենալու դեպքում դիտեն գնահատման հաշվետվություններ:

- Գնահատման կազմակերպության տնօրենը կամ համապատասխան լիազորություններ ունեցող աշխատակիցը՝

նշված աշխատակիցները պետք է մուտք գործեն համակարգ ծածկանունի և գաղտնաբառի միջոցով, որից հետո նրանց հասանելի կլինի աշխատանքային համապատասխան միջավայր: Գնահատման կազմակերպության տնօրենը կամ համապատասխան լիազորություններ ունեցող աշխատակիցը կարող են լրացնել հաշվետվության տիտղոսաթերթը կամ այն պետք է լրացվի ավտոմատ կերպով արդեն մուտքագրված տվյալներից /գնահատման կազմակերպության անվանումը, գույքի տեսակ, հասցե, մակերես, գնահատված արժեք և այլն/, ներբեռնեն արդեն իսկ ստորագրված /տնօրենի և գնահատողի կողմից/ հաշվետվությունները: Նշված աշխատակիցները միայն իրենց կազմակերպությունների մասով պետք է ունենան տիտղոսաթերթերը դիտելու հնարավորություն, տեսնեն վիճակագրական տվյալներ /տվյալ գնահատողի կողմից կատարված գնահատությունների քանակները ընտրված ժամանակահատվածում, տվյալ գույքի գնահատությունների քանակը ընտրված ժամանակահատվածում և այլն/

- Գնահատման հաշվետվությունների պատվիրատուներ կամ շահառուներ՝

յուրաքանչյուր անձ, որն ունի գնահատման հաշվետվության ունիկալ ծածկագիրը պետք է կարողանա ամբողջությամբ դիտել գնահատման տվյալ հաշվետվությունը: Կայքում պետք է լինի համապատասխան որոնման վայր, որտեղ հնարավոր կլինի ծածկագրի միջոցով գտնել, դիտել, տպել գնահատման հաշվետվությունը՝ առանց համակարգ մուտք գործելու:

- Ծրագրի ադմինիստրատոր՝

կադաստրի պետական կոմիտեի աշխատակից, ով կարող է մուտք գործել համակարգ և իրականացնել համակարգում առկա բոլոր հնարավոր գործողությունները:

Հաշվետվության ներբեռնման աշխատանքային միջավայր

Յուրաքանչյուր գնահատություն պետք է պատկանի հետևյալ 6 խմբերից որևէ մեկին՝

- Անշարժ գույքի գնահատություն
- Շարժական գույքի գնահատություն
- Բիզնեսի գնահատություն
- Նյութական ակտիվների գնահատություն
- Ոչ նյութական ակտիվների գնահատություն
- Գնահատություն /հաշվետվություն, որտեղ առկա է վերոթվարկված գնահատությունների տեսակներից առնվազն երկուսը/

Առաջին գործողությունը պետք է լինի հաշվետվության տիտղոսաթերթի լրացումը: Համակարգում պետք է նախատեսվեն տիտղոսաթերթեր /յուրաքնչյուր տիտղոսաթերթ կպարունակի 10-18 լրացվող դաշտ/ հետևյալ գնահատությունների համար՝

- Անշարժ գույքի գնահատություն
- Շարժական գույքի գնահատություն
- Բիզնեսի գնահատություն
- Նյութական ակտիվների գնահատություն
- Ոչ նյութական ակտիվների գնահատություն

Յուրաքանչյուր տիտղոսաթերթի դաշտերը պետք է լինեն պարտադիր լրացման համար:

Տիտղոսաթերթի կամ տիտղոսաթերթերի լրացումից հետո պետք է բացվի տվյալ տիտղոսաթերթերին կից գնահատման հաշվետվությունը ներբեռնելու պատուհանը: Նախնական ներբեռնումից հետո տիտղոսաթերթը և ներբեռնված հաշվետվությունը պետք է միավորվեն մեկ ֆայլի մեջ: Այնուհետև պետք է հնարավորություն լինի ներբեռնելու միավորված ֆայլը համակարգից: Գնահատման հաշվետվությունը համարվում է ներբեռնված եթե այն ստորագրվել է ներկայացվող կազմակերպության տնօրենի էլեկտրոնային ստորագրությամբ և բերբեռնվել է համակարգ: Համակարգ վերբեռնվելուց հետո տվյալ հաշվետվությունը պետք է հասանելի լինի կայքի հատուկ բաժնում դիտելու համար:

Ծրագրում պետք է նախատեսվի առանձին հաշվետվությունների միջոցով ամփոփվող վիճակագրական տվյալների ստացման հնարավորություն:

Ուսումնասիրությունների անցկացման չափանիշներ

Այն դեպքերում, երբ միևնույն գույքի կամ բիզնեսի գնահատված արժեքը 30 և ավելի %-ով կտարբերվի տվյալ գնահատված գույքի կամ բիզնեսի նախկինում գնահատված արժեքից, ապա համակարգի կողմից տվյալ գույքի

կամ բիզնեսի գնահատությունները նախնական պետք է որակվեն ռիսկային և այդ տեղեկությունները պետք է ահազանգվեն օգտագործող հանդիսացող կառաստրի աշխատակիցներին:

2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

2.1 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները:

2.2 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների արդյունքում մշակված ծրագրային ապահովումները պետք է հանձնվեն Պատվիրատուին ըստ պատրաստվածության աստիճանի՝ նախապես համաձայնեցված ժամկետներում:

2.3 Կատարողը չի կարող որևէ այլ կերպ փոփոխության ենթարկի գոյություն ունեցող էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովումը, քան դա անհրաժեշտ է սույն տեխնիկական բնութագրով անհրաժեշտ լրացումների իրականացման համար:

2.4 Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը:

2.5 Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման ներդրման հետ կապված ցանցային ծրագրային կարգաբերումները:

3. Կատարողին ներկայացվող հիմնական պահանջներ

Կատարողը պետք է ունենա՝

- Ավտոմատացված համակարգերի նախագծման, ստեղծման, ներդրման և սպասարկման առնվազն երեք հաջորդող տարիների փորձ
- Անշարժ գույքի հաշվառման և քարտեզագրման առնվազն երկու ավտոմատացված համակարգերի ստեղծման աշխատանքային փորձ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Մեգասոֆթ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
հ/հ 900013220042	ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Դավիթաշեն մ/ճ
ՀՎՀՀ 02534328	հ/հ 220290124225000
Աշխատակազմի ղեկավար	ՀՎՀՀ 00931397
Վ. Հասրաթյան	Տնօրեն Ա.Հայրապետյան
Կ.Տ /ստորագրություն/	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար ՀՀ դրամ

Ծառայության									
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գն.պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48981300/2	Ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	2450.0	4900.0	7350.0	9850.0	9850.0	9850.0	9850.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար

Վ. Հասրաթյան _____
Կ.Տ /ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
«Մեգասոֆթ» ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ
Դավիթաշեն մ/ճ
հ/հ 220290124225000
ՀՎՀՀ 00931397

Տնօրեն _____ Ա.Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն